

դելու պատրաստուած ատեն՝ (1846 ին) ղինքն  
 եւ եղբայրը զՊօղոս Չէլէպի հետն առնուլ կ'ու-  
 ղէր. բայց Յակոբ յանկարծ ծանրապէս հիւ-  
 անդանալով՝ միայն Պօղոս Չէլէպի կրցաւ ուղե-  
 կցիլ Վեհափառ ուղեւորին: Բայց կը տեսնուէր՝  
 որ այս անգամ Յակոբայ առողջութիւնը շատ  
 տկարացած էր: Սուլթանին հրամանաւն ու խոր-  
 հրօգովը 1847 Մայիս 13 ին դէպ ի Զմիւռնիա  
 ճամբայ կ'ելէ, անկէ կ'անցնի Թրիեստ, Վենե-  
 տիկ, Բատուա եւ շոգեկառօք Վիեննայի վրայէն  
 Բարիզ անցնելու վրայ եղած ատեն՝ Յուլիս 4 ին  
 գիշերն այնպէս կը ծանրանայ վիճակը, որ ամե-  
 նաճարտար բժշկաց օգնութիւնն ալ անօգուտ  
 կ'ըլլայ, եւ ի Վիեննաց հոգին կ'աւանդէ: Մար-  
 մինն ի Վ. Պոլիս փոխադրուեցաւ եւ Գուրուչէշ-  
 մէի դամբանարանը ղետեղուեցաւ:

Հարկ չենք տեսներ ընտանեաց եւ բարե-  
 կամաց եւ բոլոր ազգին եւ նոյն իսկ Վեհափառ  
 Սուլթանին՝ այսպիսի կորստեան վրայ զգացած  
 ցաւին թարգման հանդիսանալ. միայն այսչափն  
 կ'ըսենք, թէ Յակոբ Չէլէպին իւր մահուամբ շա-  
 տերուն զգալի ըրաւ իւր բաժանումը. գերեզմանին  
 վրայ լացին որքն ու այրին, թշուառն ու աղքա-  
 տը: Իւր դագաղին շուրջը խմբուած բազմախումբ  
 ժողովրդեան ահա՛ ինչ կ'ըսէր իւր դամբանականն  
 արտասանող բեմբասացը. «Կորսնցուց Օսմա-  
 նեան տէրութիւնն իրեն խիստ պիտանի ու օգ-  
 տակար Մարդ մը: Կորսնցուց հայրենիքը մեծ  
 ու խիստ խելացի ու ազնուական Անձ մը: Կոր-  
 սնցուց ազգը իւր փառքն ու պարծանքը, իւր